



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

-- դեկտեմբերի 2020 թվականի №---Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի №123Ա ԵՎ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի №45Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի փետրվարի 27-ի №45Ա որոշման 2-րդ կետը, որի համաձայն՝ «ՔՐՈՍՍԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավոր է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը Հանձնաժողովի տնօրինմանը հանձնել Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 25-ի №123Ա որոշման №1 հավելվածի №1 աղյուսակի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված ոչ աշխարհագրական կոդերը և նրանց համարային շարքերը (6043, 6047, 6048, 6049),

բ) Ընկերության 2020 թվականի դեկտեմբերի 22-ի գրությունը, որի համաձայն՝ Ընկերությունը հայտնել է, որ Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №45Ա որոշման 2-րդ կետում նշված ոչ աշխարհագրական կոդերով համարները կոմերցիոն նպատակներով օգտագործվում են մեծ թվով բաժանորդների կողմից, այդ թվում՝ կիրառվում են գովազդային արշավներում և այդ համարների փոխարինումն այլ համարներով խոչընդոտ կհանդիսանա վերջիններիս բիզնես գործունեությանը: Ընկերությունը խնդրում է թույլատրել շարունակել օգտագործել 6043, 6047, 6048, 6049 ոչ աշխարհագրական կոդերով արդեն իսկ զբաղեցված համարները, փոխարենը, Հանձնաժողովի տնօրինմանն է հանձնում 1100 հեռախոսահամար 6037 ոչ աշխարհագրական կոդից, ինչպես նաև ևս 43 հեռախոսահամար 6043, 6047, 6048, 6049 ոչ աշխարհագրական կոդերից, ընդհանուր առմամբ 1143 հեռախոսահամար, ինչն

ամբողջությամբ կլրացնի 6043, 6047, 6048, 6049 ոչ աշխարհագրական կոդերով ներկայումս զբաղեցված, սակայն հանձնման ենթակա համարների քանակը, և

հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի N°235Ն որոշումը և ելնելով վերջնական օգտագործողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 25-ի «ՔՐՈՍՍՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը համարների և կոդերի զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» N°123Ա որոշման N°1 հավելվածի N°1 աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N°1 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի մարտի 25-ի N°123Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» N°45Ա որոշման 2-րդ կետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ